



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

11 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 100-Ա  
ք. Երևան

#### «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստաձրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Բավարարել «ՔՈԼԼ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստաձրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստաձրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 11  
ք. Երևան

Հավելված  
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի  
2019 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 100-Ս որոշման

<b>Հեռուստադրագրի անվանումը</b>	<b>Թույլտվության ժամկետի ավարտը</b>
«Երկիր մեդիա»	անժամկետ
«5-րդ ալիք»	անժամկետ